

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՓՈԽՐԱԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ


ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) ստորագրել են փոխըմբռնման հուշագիր (այստեղև «փոխըմբռնման սկզբնական հուշագիր»), որը հիմք է առեղծում «Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի իրագործելիության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում շարունակական համագործակցության համար:

Փոխըմբռնման սկզբնական հուշագիրը ստորագրվել է 2011թ. նոյեմբերի 7-ին և ուժի մեջ է մտել ու վավեր է մինչև Հուշագրից բխող պարտականությունների իրականացումը: Համաձայն փոխըմբռնման սկզբնական հուշագրի Հոդված 2-ի՝ Ծրագրի իրականացումը ավարտվելու է 18 ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հետևաբար, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, հաշվի առնելով առ այսօր համագործակցության դրական արդյունքները և համաձայն Հոդված 11-ի, սույնով համաձայնում են փոփոխել փոխըմբռնման սկզբնական հուշագրի Հոդված 2-ը և շարադրել այն հետևյալ կերպով. «Ծրագիր ուժի մեջ է մտնում սույն Հուշագիրը ստորագրելուց անմիջապես հետո և ավարտվելու 24 (քսանչորս) ամսվա ընթացքում՝ Ծրագրի շրջանակներում նախատեսված բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը»: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում ստորև նշված ստորագրման պահից:


ՀՀ արտակարգ իրավիճակների  
նախարարության անունից

Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպության  
անունից



---

Արմեն Երեցյան  
Նախարար



---

Անդրեյ Սորոկին  
Դեսպան, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի  
ղեկավար

Ամսաթիվ.

Ամսաթիվ.